ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

« ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Նիստի անցկացման՝

-վայրը՝Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ.

-օրը՝ 27.01.2021թ,- ժամը՝ 15:00

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան

Հանձնաժողովի անդամներ Ա. Ղալումյան, , Կ. Հարությունյան, Ռ. Աբրահամյան, Կ. Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Բ. Արամյան

Ընդունել ի գիտություն, որ «ԴԱԴԻ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ -ի կողմից 27.01.2021 թվականին « ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/21» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ստացվել է պարզաբանման հարցում.

Հարցադրում

Մրցույթի հրավերի մեջ ,,Պիտանելիության չափորոշիչներ,, բաժնում որևէ պահանջ չկա տեխհսկողության լիցենզիաների և համապատասխան ներդիրների մասով: Օրինակ, եթե մասնակիցը ունի լիցենզիա՝տեխհկսողության ,բայց միայն մեկ ներդիր բնակելի հասար. և արտադր.շինար . տեխհսկողության,իսկ ընդհանուր շինարարարական աշխատանքների մեջ առկա են նաև հիդրո աշխատանքներ կամ էներգո աշխ., արդյոք կարող է մասնակցել մրցույթին և իրականացնել տեխհսկողություն: Եթե մրցույթի հայտարարության մեջ կոնկրետ պահանջը չկա, ապա հետագայում ինչ գործընթացներում և ով կարող է պահանջել այդ լիցենզիաները: Ենթադրվում է, որ եթե պատվիրատուն ի սկզբանե իր մրցույթի հայտարարության մեջ նման լիցենզիաների առկայության պահանջ չի շեշտել, ապա հետագայում նույնպես իրավասու չէ պահանջել: Նման խնդիրներառկա են նաև բոլոր նմանատիպ մրցույթի հայտարարություններում: Խնդրում ենք պարզաբանել:

Շնորհակալություն:

Գնահատող հանձնաժողովի կողմից տրված պարզաբանում

Պարզաբանում

Չնայած որ հրավերով չի նշվում լիցենզիայի և ներդիրների վերաբերյալ, սակայն գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն, ուստի՝ կախված շինարարության ոլորտից՝ մասնակիցը պետք է ունենա լիցենզիա և ներդիրներ՝ ըստ համապատասխան ոլորտների:

Համաձայն ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N 775-Ն որոշման 5-րդ կետի՝

-Անձը սույն կարգի 6-րդ կետով սահմանված ցանկացած ոլորտում կարող է զբաղվել շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեությամբ, եթե նա ստացել է շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիային կից համապատասխան ոլորտի աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձի (անձանց) լիցենզիայի ներդիր (ներդիրներ):

Համաձայն նույն որոշման 8-րդ կետի՝

Շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության իրականացման լիցենզիա ստացած անձինք կարող են գործունեություն իրականացնել սույն կարգի 6-րդ կետով սահմանված ոլորտներից որևէ մեկում կամ ոլորտներում, եթե լիցենզավորող մարմնի կողմից ստացել են համապատասխան ոլորտի (ոլորտների) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Հանձնաժողովի. Նախագահ՝		Ա. Կիրակոսյան
Անդամներ՝		Ա. Ղալումյան
		Կ. Հարությունյան
		Ռ. Աբրահամյան
		Կ. Անտոնյան
Քարտուղար՝		Բ. Արամյան